

## Հայտարարություն

Լսողության խանգարում ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրում թափուր աշխատատեղի հարցազրույցի

**Պաշտոնը՝ ուսումնական հաստատության վարչատնտեսական աշխատանքի գծով տնօրենի տեղակալ**

Աշխատավարձը՝ սահմանված դարույքաչափով

Գրաֆիկ՝ ամբողջ դրույք

Աշխատանքային փորձը՝ առնվազն 5 տարի

Տարածաշրջան՝ Երևան, Նորքի Մարաշ

### Աշխատանքի նկարագրություն

- Պատասխանատու է ուսումնական հաստատության շենքի և գույքի պահպանման, ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովման, ուսումնական հաստատության սանիտարահիգիենիկ ու բարեկարգ վիճակի, հաստատության ուսումնական պարապմունքներին՝ դասասենյակների ժամանակին նախապատրաստման, ինչպես նաև հակահրդեհային պաշտպանության և սպասարկող անձնակազմի աշխատանքի կազմակերպման համար:
- Միջոցներ է ձեռնարկում ուսումնական հաստատության ուսումնամեթոդական բազան հարստացնելու և ամրապնդելու համար:
- Իրականացնում է տնտեսանյութական միջոցների հաշվապահական հաշվառում և ռեսուրսների օպտիմալ կիրառման վերահսկում:
- Վերահսկում է ֆինանսական փաստաթղթերի ձևակերպումների ճշտությունը, օրինականությունը, վերջնաժամկետների պահպանումը:
- Ապահովում է հաստիքային, ֆինանսական և դրամարկղային աշխատանքների ճշգրտությունը:
- Իրականացնում է հաստատության գույքագրման, նյութական բալանսի և արխիվի վերահսկողություն:
- Ղեկավարում է հաշվապահության, պայմանագրային ծառայությունների, տեխնիկական սպասարկման աշխատանքները:

### Անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ

Տնօրենի տնտեսական աշխատանքի գծով տեղակալի պաշտոնն զբաղեցնողը պետք է **իմանա**

- «Հանրակրթության մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կազմակերպություններում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին», «Գնումների մասին» ՀՀ օրենքները, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը, իր պաշտոնային

պարտականություններին վերաբերող՝ նախարարության համապատասխան նորմատիվ ակտերը, իրավական այլ փաստաթղթեր.

- հանրակրթական ուսումնական հաստատության սանիտարահիգիենիկ նորմերը, աշխատանքի անվտանգության տեխնիկայի, հակահրդեհային անվտանգության կանոնները, մինչբժշկական օգնության հիմունքները, սովորողների կյանքի և առողջության պահպանման կանոնները:

Տնօրենի տնտեսական աշխատանքի գծով տեղակալի պաշտոնն զբաղեցնողը պետք է **կարողանա՝**

- իրականացնել ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազայի կառավարումը, գույքի, տեխնիկական միջոցների, փոքրարժեք ուսումնական և այլ միջոցների հաշվառումը և պահպանումը.
- ապահովել ուսումնական հաստատության անվտանգության համակարգերի անընդհատ գործունեությունը:

### **Որակավորման պահանջները**

Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի տնտեսական աշխատանքի գծով տեղակալի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա՝

- բարձրագույն (տնտեսագիտական, ֆինանսատնտեսական) կրթություն:
- նվազագույնը 5 տարվա աշխատանքային փորձ (կրթական ոլորտում աշխատանքային փորձը կդիտվի որպես առավելություն)
- Ռուսերեն և անգլերեն լեզուների իմացությունը խիստ ցանկալի է:

Ձանգահարել՝ (010) 651060, (010) 651050, (091) 529957

Ուղարկել՝ ինքնակենսագրականը [lxue.dproc@mail.ru](mailto:lxue.dproc@mail.ru), [babayanlusine41@aspu.am](mailto:babayanlusine41@aspu.am)

Այցելել՝ Երևան, Նորքի Այգիներ 193

Նախնական ընտրություն անցած թեկնածուները կհրավիրվեն հարցազրույցի:

Դիմելու վերջնաժամկետը՝ 15.03.2019թ.